


Բցիցք մայր մեղուաց կամ պարս սայու, եւ բցիցք արուեստական կամ փրկութեանս. — Մայր մեղուաց բլիջներն անման են բոլորովին արու և գործասէր մեղուաց բլիջներէն, և ոչ նոյն կարգով և ուղղութեամբ գրուած, այլ զատուած անոնցմէ և բաժակաձև իմն: Մեղուներն առելի մոմ կը գործածեն՝ խտանեալ քիչ մը ականամոմով՝ այս բլիջներուն շինութեան, որոց խորութիւնը քիչ է, իբր 5 կամ 6 հազարորդամետր, և տրամագիծը 8, 5 հազարորդամետր. բայց քիչ ժամանակէն կ'երկնայ, և վրան կը զոցսի:

Մայր մեղուաց բլիջներն՝ սր կրնան ըլ-

լալ փեթակի մը մէջ թուով հինգ կամ վեց, և երբեմն տասն կամ երկուսասան, և մինչև քսան և քսանհինգ, կը շինուին սովորաբար մաղին եզերքին մօտ երրորդ մասին վրայ, և իբր փեթակին կեղծոնը:

Երբեմն մեղուներն կազմեն մայրական բլիջներ խորխտներուն մէջ տեղ: Այս կը պատահի եբբ մայրերինն մեռած ըլլայ և ուզեն ուրիշ մայր մը ունենալ գործաւորի մը թրթուրէն, ինչպէս պիտի տեսնենք: Այս բլիջներն կոչին Արունաստական կամ փրկութեան բլիջներ:

Շարայարեչի




# ՎԵՍՏԵԱՆ ԿՈՅՍ

ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՊ

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՌԱՋԻՆ ԳԱՐՈՒ

(Տես յ'էջ 376)



# ԳԼՈՒԽ Է

Վ Ի Ր Ա Ի Ո Ր Ե Ա Լ Ն



Արունաստական կոչուելիս տաճարէն կը հեռանար, Սեբաստ Սարգիստ Անիկետոսի ննջարանին մէջ Ղդային թրմբուրով թաթամբ բռնուած, չէր կարող միտքը ամփոփել՝ իբր զանուած տեղն իմանալու համար: Եւ մինչդեռ երկար ժամանակ խորհել կը ջանար, յանկարծ ննջարանին դռներն բացուեցան, և երեցաւ տժգոյն զիմօք օրիորդ մի՛ զոր առաջին անգամ տեսած էր ամփոթատրոնին մէջ: Նա ոտից ծայրի վրայ քայլելով՝ մօտեցաւ հիւանդին անկողնոյն, և ժպտեցաւ. բայց վախելով թէ մի՛ գուցէ դարձեալ զառանցանաց մէջ ընկնի, կազգորիչ պեղ մը մօտեցուց անոր շրթանց: Վիրաւորն

գործխարար կուլ աուաւ դայն, յետոյ ուզեց քանի մի խօսք բսել, բայց փշրոնիս թոյլ չտուաւ՝ բսելով:

— Մի՛ խօսիր, և ջանա՛ լաւ քնանալ, ես քեզ համար աղօթելու պիտի երթամ:

Եւ յամրաքայլ դուրս ելաւ, թողլով ըզՍեբաստս, որ ինքն զինքը երազի մի խաղալիկ կը կարծէր, և կը ջանար անցեալը յիշել. անօգուտ ջանք, որովհետեւ այն աստիճան զինով էր Գամետրիանոսի հանդիպած պահուն, որ ոչ ընդունած հարուածը միտքն էր, և ոչ զինքն օտար տան մէջ փոխադրողը:

Մտածելէ խոնջ, խողիւալ քուն մ'ունեցաւ՝ որ երկար չտեւեց, և որուն յաջորդեց

հետզհետե անող ջրաց գրգռում մի իւր հրա-  
բորբոք աչքերն սեւեռած էին դրան վրայ, և  
անձկանօք անոր բացուելուն կը սպասէր :

Եւ տեսնելով որ փափաքը չի կատա-  
րուիր, այլ ևս չի կրցաւ դիմանալ. դժուա-  
րութեամբ նստաւ անկողնոյն եզերքը. ոտքի  
ելաւ այս և այն կողմ շարժելով, և պատին  
կոթնելով՝ ղէպ 'ի դուռը գնաց :

Ինքն այլ չէր գիտեր ըրածը : Բուրբուրի  
ինքն իրմէ գուրս ելած՝ մէկ բան միայն  
կ'ուզէր, այսինքն է՝ հետեւել Փլորոնիայի  
բայկերուն :

Այսպէս յառաջացաւ մինչև մարմարեայ  
օրն մի և կանգ առաւ, որովհետև կարծես  
գիտինք կը շարժէր իւր ոտից ներքև : Պահ  
մի կենայէ յետոյ՝ ուզեց դարձեալ առաջ  
երթալ : Դանդաղ և միօրինակ երգ մի ա-  
կանջին զարկաւ. աւելի լաւ լսելու համար  
բացաւ դուռը և տեսաւ մութ և փոքր սան-  
դուղ մի : Հետաքրքրութենէ զրդեալ՝ վար  
իջաւ : Սանդղիկն ստորտը երկայն նկուղ մի  
կար, որուն մէկ կողմը լուսաւորուած էր. կըր-  
ցածին չափ շուտ անցաւ անկէց, և քիչ վերջը  
հասաւ ցած և նեղ խցիկ մը, ուսկից լաւ կրնար  
տեսնել քոյի սենեկին միջի անցուղարձը :

Անիկետոս խորանին առջև ծնրադրած՝ իւր  
քահանայական զգեստներով, կիրակի օրուան  
առաջին ժամերգութիւնը կ'ընէր : Փլորոնիս  
և Դոմիտիլլա կանանց խմբի մի մէջ շերտե-  
ռանդութեամբ իրեն կը պատասխանէին .  
մարդիկն այլ մեկուսի ծնրագիր կ'ազօթէին :

Այս տեսնելով երիտասարդ պատրիկն,  
զոր ոչ ոք տեսած էր, այլ ևս չի կրցաւ  
զոտնել ինք զինքը. և որովհետև թեթեւամը-  
տութիւնն իւր մէջ ուրիշ ամէն յատկութիւն  
ներէ աւելի էր, ուստի սկսաւ խնդրել այն  
արարողութեան վրայ՝ որ իրեն այնքան տար-  
օրինակ կը թուէր : Բայց քիչ մը վերջը  
իւր ծիծաղը լրջութեան փոխուեցաւ, երբ  
տեսաւ զՓլորոնիս, աչքերն յերկինս սեւե-  
ռած և խոր յարտակութեան մէջ ընկղմեալ :

Երբ ժամերգութիւնն վերջացաւ, հաւատա-  
ցեալք խմբովին ղէպ 'ի դուռը դիմեցին .  
բայց դեռ դուրս չելած՝ տեսան պատկառելի  
ծերուկ մի, որ երիտասարդի մթ կոթնած՝  
ղէպ իրենց կու գար. ամէնքն մի և նոյն

զգացումէն մղեալ՝ ծունգի եկան : Նորեկն  
օրհնեց զիրենք, և քրիստոնեայ քահանային  
մատենալով,

— Անիկետոս, ըսաւ, ամաց բազմութե-  
նէն զողորուն ձայնով, եկայ, — որովհե-  
տեւ առնս չորս կողմը լրտեսներ կան, — քեզ  
ձախողը լուր մի տալու, որպէս զի քու պաշ-  
տօնակցացդ իմացընես, իրենք ալ իրենց 'օ-  
րերուն : Դոմիտիանոս հրամայեր է՝ որ  
Հրէայք, զմեզ ըսել կ'ուզէ, պիտի աքսո-  
րուին Հռովմէն, և վայրի զազանաց պէս պի-  
տի հալածուին :

— Աստուծոյ կամքն օրհնեալ ըլլայ, ը-  
սաւ Անիկետոս :

— Ամէն, պատասխանեցին հաւատա-  
ցեալք միաբերան :

— Ամէն, կրկնեց ծերունին, բարձրացը-  
նելով իւր յարգելի դուռը, կարծես արդէն  
սրբոց լուսաւոր պսակը կը կրէր. ամէն :

Յետոյ աւելցուց ոգևորեալ ձայնով.

— Թո՛ղ յօշոտես մեր անդամները. թո՛ղ  
մեր արիւնն իբր հեղեղ ընթանայ Հռովմայ  
փողոցաց մէջ . օսկայն Քրիստոսի կրօնքն  
անզրկուելի պիտի մնայ, և անթիւ մարտի-  
րաններով փառաւորուած՝ պիտի դիմանայ  
մինչ 'ի վախճան դարուց : Բրպեակը իմ, ա-  
ռանց տրտնջելու թող տանք . օր աշխարհ  
զմեզ ամբաստանէ և մեռցնէ . որովհետև  
մեծազոյն պարզև մի չէ՞ մեռնիչն այնպիսի  
կրօնքի մը համար, որ Փրկչին խոստմանց  
համեմատ՝ ցյաւիտեանս պիտի յաղթանակէ,  
արհամարհելով ատելութիւններն և հալա-  
ծանքը : Մի՛ վախնաք բնաւ, որովհետև մեր  
Հայրն որ յերկինս է՝ կը հակ մեր վրայ,  
ըսաւ ինձ այս առաւօտ Փրկչին աշակերտն  
Յովհաննէս՝ որ Եփեսոսէն կու գայ : Արդ  
ծունր գնենք և փառարաններ երկնի և եր-  
կրի Արարիչը :

Երբունին ծունր գրաւ, և մեզմ ձայնով  
զոհաբանական աղօթք մի կարգաց. բայց  
հազիւ թէ առաջին բառերն ըսեր էր, ահա  
մարդկային մարմնոյ մի սեմին վրայ զլորտ-  
կելու ձայն առ ինքն գրաւեց ամենուն ու-  
շազրութիւնը : Սեբաստո Սաբինոսն էր, որ  
իւր ումին վրայ չափէն աւելի վստահանալով՝  
մարեր էր :

Անիկետոս և Փլորոնիա քովը վագեցին :  
— Ո՞վ է այս մարդը, հարցուց ծերունին :  
— Կայսեր պատագիր Պարթեմոսէն վի-  
րաւորութեամբ պատրիկն է, զոր տունս փոխա-  
զրած էի :

— Սոխրական խոհեմութեամբդ շես շար-  
ժած :

— Եթէ սխալեր եմ, ներէ՛ ինձ, որով-  
հետև « զոր արձակեացես յերկրի, եղիցի ար-  
ձակեալ յերկինս » , ըսաւ քրիստոնեայ պաշ-  
տօնեայն խոնարհ ձայնով :

— Ո՞՛ է և կերպով պարտքդ շես պակ-  
սած . գլխութիւնն անասմանն է, և իւր ձեռ-  
քերն պէտք է բաց ըլլան քրիստոնէից և հե-  
թանոսաց համար : Խոհեմութիւն միայն պակ-  
սեր է քեզմէ . բայց երբ նա արգելք պիտի  
ըլլար մարդասիրական գործ մի կատարելու,  
լաւ ըրեր ես զայն մի կողմ՝ ձգել : Աղօ, ինչ-  
պէս մեր եղբայրներէն միոյն՝ այնպէս պէտք  
է ինամբ ունենալ ասոր վրայ . և սակայն  
պէտք է կասկածել իւրմէ, որովհետև մեր խոս-  
քերն լրած ըլլալով՝ զմեզ կրնայ մատնել :

— Նա այդ վտառութիւնը պիտի չունե-  
նայ, գոչեց Փլորոնիա :

— Ո՞վ ես դու, աղջիկ, որ կը յանդգը-  
նիս ծերունւոյ մի խօսքը ընդհատել, ըսաւ  
ալևորն խտուրթեամբ :

— Այս այն կոյսն է, որ մեր մարտի-  
րոսներէն միոյն նշխարքը վերցունելուն հա-  
մար՝ ամփիթատրոնին մէջ գազանաց գատա-  
պարտեցաւ, պատասխանեց Անիկետոս :

— Աստուած օրհնէ զքեզ և արժանի ընէ  
մարտիրոսութեան պատկին, կրկնեց յայնմամ  
ծերունին՝ ձեռքը Փլորոնիայի գլխոյն վրայ  
դնելով որ ծնրագիր կեցած էր : Աստուած  
ձեր հետ ըլլայ, զաւակներս, աւելցուց . ոչ  
ոչ թող հետս գայ, այս տան գաղտնի ելքը  
շատ լաւ գիտեմ : Աւելի ապահովութեան  
համար մինչև երեկոյ հոս կեցէք և աղօթե-  
ցէք մեր բարեկամաց և թշնամեաց համար :

Քրիստոնեայք զարձեալ ծուր գրին ծե-  
րունւոյն առջև, որ ինչպէս եկեր էր՝ այնպէս  
ալ գնաց :

Մեքստոսը գարձեալ անկողին տարին . իւր  
հետ գնացին Անիկետոս, Դամիտիլլա և Փլա-  
րոնիա :

— Փառք կու տամ Աստուծոյ որ այսօր  
կրցայ Եղեմեսի խօսքերը լսել, ըսաւ հով-  
մայեցի հուպատոսին կինն : Ա՛հ, սրչափ եր-  
ջանիկ պիտի ըլլամ Յովհաննու աշակերտը  
տեսնելով : Բայց այս շնորհին անարժան եմ,  
որովհետև տկարութիւնս ինձ խորշելի կ'ընէ  
զմահ, և արգելք կ'ըլլայ՝ որ տղայոցս պատ-  
ճառաւ բացէ 'ի բաց խոստովանիմ հաւատքս :

— Խեղճ մայր, երբ վայրկեանն զայ  
պիտի չտրանաս Աստուածդ, ըսաւ Անիկե-  
տոս յուզեալ սրտիւ :

Յաւագին հառաչանք մի խօսակցութիւնին  
ընդհատեց . Մեքստոս անկողնոյն մէջ կը  
հեծէր :

— Հոս չի կրնար կենալ, ըսաւ Դամի-  
տիլլա՝ Սեքստոսը ցուցնելով :

— Այս վիճակիս մէջ ճեր կ'ուզես որ  
երթայ :

— Իմ տունս : Եթէ շես հակառակիր,  
այս գիշեր ծառայներս կը դրկեմ զինքն առ-  
նըլու համար . խաղաղութեամբ կրնայ ապրիլ  
մեր քով մինչև առողջանայ, և Փլաւիոս և  
ես այնպէս կը խնամենք զինքը՝ իբր թէ  
մեր զաւակն ըլլար :

— Բայց եթէ այս գիշերուան դէպքն ի-  
մացուած է, զիւրաւ կրնան գտնել զնա քու  
տանդ մէջ, աւելցուց Փլորոնիա, որ ծածուկ  
սրտեղուութիւն մի կը զգար՝ ազնուական  
տիկնով զիտաւորութիւնը հասկնալով :

— Յայտնի չի կրնար ըլլալ : Պարթե-  
նոսի առողջութեան համար շատ աւելի ժա-  
մանակ պէտք է, և այն գիշերուան մթու-  
թեան մէջ անկարելի է որ Գոմեախանոս  
ճանչցած ըլլայ զՍեքստոս :

— Կուռնելիս դեռ չեկաւ, վրայ բերաւ  
Փլորոնիա, ուզելով խօսակցութեան նիւթը  
փոխել :

— Աղքեօք քա խորհրդոյդ հետևելով՝  
պէտք է իմացնեմ Կուռնելիայի՝ իրեն սպառ-  
նացող վտանգները, ըսաւ Գոմիտիլլա Անի-  
կետոսի պակնջէն վար կամաց ձայնով, որ  
Փլորոնիա բառ մ'այլ չի լսեց :

— Այո՛ պէտք է իմացնել իրեն, որպէս  
զի պատրաստ զանուի անոնց զիմադրելու .  
բայց ոչ այսօր ըսէ և ոչ հոս...

— Եթէ կարելի է, այնպէս մ'ըրէ որ գէթ

անգամ մի կարենամ հետը խօսիլ. կարծեմ զիս չի ճանչեր, որովհետեւ շատ փոքր էր՝ երբ զինքը տեսայ. բայց իւր մօր քաշած ներք պիտի պատմեմ իրեն :

Այս բնելով ննջարանէն դուրս ելաւ, և մէկ երկու վայրկեան վերջը ներս մտաւ կուռնելիայի հետ : Քրմուհին իւր հօրեղբոր, որդւոյն անկողնոյն մօտեցաւ և յուզուած ձայնով հարցոց .

— Կեանքը լուսնդի մէջ է :

— Վէրքը մահացու չէ, և Անիկետոս կ'ապահովցնէ թէ մի քանի օրէն վէրքն անհետ պիտի ըլլայ :

Կուռնելիա Անիկետոսի նայեցաւ. և ամփիթարոնի ծերունին ճանչնալով, ձեռքն աւնոր կարկանդակէ քաղցրութեամբ ըստ .

— Դու մայրս ճանցած ըլլալով՝ ինչ համար օտար չես այսուհետև :

Այս ծանօթ մ սրբուն ձայնը լսելով Սեքստոս՝ սթափեցաւ, և քիչ մի վեր ելնելով .

— Դժո՛ւ ես, կուռնելիա՛, ըստ ուրախութեամբ :

— Այո՛ ես եմ, Սեքստոս, զբեզ սեսնելու եկայ :

Երիտասարդ պատրիկն չի պատասխանեց, այլ չէր նայեր կուռնելիայի . իրեն աչքին ուրիշ բան չէր երևեր՝ բայց միայն Անիկետոսի քով կանգնած Փլորոնիան :

— Ուրեմն չէի երազեր, զոչեց յանկարծ, ամփիթարոնին մէջ մանկահասակ և ոսկեհեր աղջկան՝ Պարիսի ձեռօք մահուանէ ազատիլը տեսնելով :

Փլորոնիա չէր գիտեր ինչ պատասխան տալ : Կուռնելիա տեսնելով Փլորոնիայի այլալուծիւնը, բռնեց ձեռքէն, և Սեքստոսի անկողնոյն քով սանելով,

— Սեքստո՛ս, ըստ, ուրեմն այլ չն՞ս յիշեր զՓլորոնիա՛ որ մօրս տունը ծնաւ, և որ հայրենական տան բակին մէջ մեր մանկական խաղերուն կը մասնակցէր :

— Փլորոնիա՛, ի՛նքը. բայց ի՛նչպէս կ'ուզես որ ճանչնամ՝ այսքան տարի զիրար չի տեսնելէ յետոյ :

— Փառատոյայի մեանելէն յետոյ՝ մայրս Փլաւիտ Սարգիսի տնէն հեռացաւ, և Անիկետոս զիս իւր քով առաւ, պատասխանեց

Փլորոնիա իւր ամենաքաղցր և գրեթէ մանկական ձայնով :

— Բայց մ'ը եմ. ի՛նչպէս կ'ըլլայ որ հոս կը գտնուիմ, ըստ պատրիկն՝ շուրջը գիտելով :

— Երկվեղած մարդու մի տան մէջ ես, որ ճամբուն վրայ զբեզ վիրատուած գտնելով՝ հոս բերաւ, պատասխանեց Փլորոնիա :

— Բան մ'ալ չեմ յիշեր, ի՛նչպէս և մ'ը վիրատորեց զիս :

— Անձանօթ մի՛ որ կայսեր ազատագիր Պարթեմուսին կ'ընկերէր : Խոհեմութիւնը ձեռքէ մի ձգեր, և պահուած կեցիր՝ մինչև որ առողջանաս, եթէ չես ուզեր Դոմեստիանոսի վրէժխնդրութեան զոհ երթալ . որովհետեւ անշուշտ ինքն էր զբեզ վիրատորդը :

— Դոմեստիանո՛ս, զոչեց Սեքստոս : Յետոյ աւելցոց ամենամեծ հանդարտութեամբ . Շատ պիտի չապրիմ, որովհետեւ կայսրն ինչպէս մի ճանճի՛ բնաւ չի խնայեր մարդու մի կեանքը. առանց ուզելու՝ իւր վեհափառութեան դէմ յանցաւոր գտնուեր եմ : Մահուանէ չեմ վախեր. մէկ ցաւ միայն ունիմ, այն է՝ որ պէտք եղածին պէս չի կրցայ վայելել կենաց հաճայքները : Այո այլ կայ որ պատրիկ մի նախատական մահուանէ ազատելու կերպը լաւ գիտէ :

— Այո՛, ոճիր մի գործելով, վրայ բերաւ Անիկետոս խառութեամբ :

Այնպիսի անուն մի տրուելը լսելով այն մահուան՝ որ շատ պատուաւոր էր այն ժամ մանակաց մէջ, յորում Հռովմայեցիք անձնապան կրլային՝ դատապարտեալ չի մեռնելու համար :

Սեքստոս ծերունւոյն նայեցաւ. և միտքը բերելով առաւօտը անսած արարողութիւնը, իսկոյն հասկցաւ թէ կը գտնուի տան մէջ այնպիսի անկուռ՝ զոր կիրար իւր սկեպտական ծաղրածութեանց նիւթ ընել : Բայց զինքը հիւրընկալութիւն գաղանկը չուզելով իմացնել կուռնելիայի, որ իբր վեհատայի քրմուհի՛ կ'ատէր քրիստոնէական աղանդը, ձեցեց զուրբ բարձին վրայ և քնացաւ :

Կուռնելիա քիչ մի ես կեցաւ հոն, և ապա պատրաստեցաւ մեկնել : Երթալէն առաջ կ'ուզէր իմացնել Դոմիսիլլայի՛ կայսեր


ի տանարն ըրած այցելութեան միջոց հան-  
դիպածները. սակայն տիկինն իմացուց իրեն  
թէ ժամանակն ուշ էր, միանգամայն խոս-  
տանալով որ յաջորդ օրը Անիկեասոսի հետ  
իրեն այցելութեան երթան :

Մանկամարդ քրմուհին հեռացաւ՝ շատ  
զոհ այն խոսամունքէն. սպահ մի յետոյ Գո-

միտիլա եւ պիտուր դռնէն դուրս կ'ելնէր՝  
իւր պատգարակը երթալու համար, առանց  
նշմարելու մէկը՝ որ զինքը կը լրտեսէր :

Այդ մէկն Ստեփանոսն էր, Գոմիտիլայի  
անտեսն, որ իւր սերունդն հրամանաւ փլա-  
ւիտ Եղեմեսի կողակցին ամենափոքր շար-  
ժուան իսկ աչքէ չէր փախցնէր :

Շարայարեցի



# ՀԱՆԴԵՍ ԹԱՏԵՐԱԿԱՆ

## ԽԱՂԱՄՈԼ

(Տես յէջ 314)

### ՀԱՆԴԵՍ ԵՐՐՈՐԴ

#### ՏԵՍԻԼ ԱՌԱՋԻՆ

Մմբատ. — Այ՛, ճիշդ է, ուղիղ է  
մտածմունքս, և սէտք է զործադրեմ... ալ  
ինձի կարելի չէ Ռոստով մնալ. կը մեկնիմ  
կ'երթամ Բագու, կ'երթամ որդիական ա-  
զօթքիս պարտքն հատուցանելու ինձ հօրս  
կայքը արբելով եւ յաշագիւն) գերեզմանին վը-  
րայ. և յետոյ եթէ հօրէս մնացած կարգա-  
դրելիք գործեր կան՝ կը կարգադրեմ, և  
զուցէ այն տեղ և կամ տրիշ քաղաքի մը  
մէջ Ապուստոս ինձի յաջող գործի մը զուտ  
բանայ... Այ՛, մնալու ալ անկարելի է,  
մնալ և Գարեգինին ըրած գործերը և բըռ-  
նած ճամբան տեսնել՝ կարելի չէ. լաւ է  
որ ես մեռնիմ անօթութենէ քան թէ պա-  
տիւս մեռնիս. — Ունեցած կարեւոր պատ-  
րաստութիւններս պէտք է տեսնեմ ու մեկ-  
նիմ. Թարս... քայքայ Ծախ Թարսոյի հետ  
կ'ազգեմ խօսիլ և այդ անպիտանին ալ վեր-  
ջին խօսքը ըսել. Թարս... Եւ

#### ՏԵՍԻԼ ԵՐԿՐՈՐԴ

#### Մմբատ և Թարս

Թարս. — Հրամայէք, պարոն Մմբատ  
Մմբատ. — Կարճ խօսք մ'ըսելիք ու-  
նիմ քեզի, Թարս. կը տեսնեմ ցաւօք սրտի՝  
որ դուն մեր տանը պատուոյն ամենեկին հող  
չունիս. քանի որ ինձ հայրս այս տեղ էր՝  
քեզմէն աւելի ուշադիր և խնայող ծառայ չէր  
գանուեր. Իսկ այս վերջին երեք տարինե-  
րուս մէջ՝ կարծես զուն մեր տանը երդուեալ  
թշնամին դարձեր ես...

Թարս. — Պարոն Մմբատ, Բնշ կ'ը-  
սէք, միթէ կարելի է որ...

Մմբատ. — Խօսքը մի կտրեր, Թարս.  
մի ուզեր զուր տեղ զքեզ արդարացընելով  
սուտ խօսիլ. ես որ բան մը կ'ըսեմ՝ առա-  
ջուց հազար կը դիտեմ, հարիւր կը քննեմ  
և հարիւր ալ կը մտածեմ, և յետոյ հազ-  
թէ մէկ անգամ կ'ըսեմ... Թարս, կարելի  
է որ դուն ինձի թշնամի չըլլաս, որովհետեւ  
քեզի չարիք մը չընելէ զատ՝ միշտ ալ ձեռ-